61. ԱՌՈՒԾԵՆ ՏԸՂԱՆ

Մըհետե էրկու ախպեր թաքավեր ըն ըլալ։ Նահանք ճոկ-ճոկ երգիքներում ըն ըլալ թաքավըրութուն ընելիս։

Կուճուր ախպերը լոխան հարուստ ա ըլալ։ Էտ էրկուսեն էլ խոխա չի ըլալ։ Ընցնում ա մին քանե տարե, շատ թա խրեգյ, էն օրն էլ եկու, հիրը նահանց ըրկուքանեն կնանեքյն էլ խոխա պիրան։ Էտ ուրերեն էրկու ախպերքյը մըեծ ուրխութուն ըն սարքում ուրանց պըրըկամներեն նան ժողովուրթեն ըռաչեն։

Խոխեքյը մըծանում ըն, տանում իրեք տըրեկան։ Մըեծ ախպորը՝ ախճիգյ ար, կուճուրինը՝ տղա։

Ուրերան մին լավ օր, կուճուր ախպերը նստած ուրան կահեն յրա քնենքյ ա անում, թա խե՞ բիդի ուրանց թաքավերութունը ուրուշու ճանգյ ընգնե, լավ կինի, վեր ուրան ախպորը նհետ խնամի տանա, էրկու թաքավերութունն էլ միանան։

Էտ մըթկավը ղե յա տամ մըեծ ախպորը, վար մըեծ ախպերը կյա։ Մըեծ ախպերը կյամ ա։ Նահանք ուրուր նհետ մըսլըհաթ ըն անում, ետնան կյամ ըն էն մըթկեն, վար մըեծ ախպորը ախճիգյը կուճուր ախպերը յոր օնե, ուրան քըշտեն պահե, ուրան տղեն նհետ սըվըրցընե, հուսումնարան քըցե, ուրան աշկեն ըռաչեն ինի՞։ Մըեծ ախպերը էտ պանը գյիդալավ, էտ խաբարը սկընալավ ռազի յա ընում։

Ընդեսանը մըեծ ախպերը ուրան ղոշունավը ուրան ըխճըկանը զարկում ա կուճուր ախպորը կոշտը էն պըյմանավը, վար խոխեքյը տասնըհենգյ տըրեկանը թըմամած փսակեն։

խոխերքյը օր կանց օր մըծանում ըն։ Նահանք ուրուր անա շատ սօրուն ըն ընում, ուրուր էլ շատ ըն սիրում, գյվա̈քի գյուղում չըն, վար քուր ու ախպեր չըն, մին մորա ծընված։

Նահանք շկոլ ըն քյընա̈մ ուրուր նհետ, երք ըսելավ, սերավ՝ հունցը վար քեր-ախպեր։

Նահանք արտեն տասնըհենգյ տըրեկան հասակն ըն հըսալ։

Մին օր Թաքավերը ուրա̈ն ըմըրաԹեն վըեսկե բըլկոնան, եշում ա, տեսնում նահանք ուրուր նըհետ ուրա̈նց բաղըմը շոռ կյալիս, ամմա հունցու քեր-ախպեր, մին օրիշ պա̈ն տեսնում չի։

Մին օր էլ Թաքավերը ղե յա տամ էրկուսին էլ ուրա̈ն կոշտը, ասում. — Վե՛րԹիքյ, ինձ անգուճ կալեքյ, մըհեկանց տենը գյիդացեքյ վար տուք վեչ Թա̈ քեր-ախպեր ըք, այլ ղորփոր խոխեքյ ըք։ Ծտնան տուս ա օնըմ Թոխտը, վար մեչին կյրա̈ծ ա, Թա̈ վար տասնըհենգյ տըրեկան տա̈ռնա̈ն, պիդի փըսակվեն։ Պիդի հըրսանեքյ անեն։

— Ամմա յըես օղում ըմ ծըեզ մին տարավ զարկեմ մըեծ ախպորըս կոշտը, վեր համ սըվերիքյ էլհա, համ էլ մըեծ ախպերս ծեր կարոտն առնե։

Մըեծ ախպերը տըսնալավ, վար ուրա̈նց խոխեքյը մըծացալ ըն, վեզիրնե յա զարկում կուճուր ախպորը կոշտը, ասում, վար նահանց փըսըկվելի վախտըն ա, Թող կյա փըսակեն։

Վեզիրնեն խա̈բա̈րը տանըմ ըն կուճուր ախպորը։ Կուճուր ախպերը մըեծ հըրըստոԹունավ, վըեսկե փեշքեշներավ հըղե յա ընում ղըրա մըեծ ախպորը Թաքավերոթունը։ Իրեք ամես հղե քյընա̈լա̈նը ետը հըսնում ա ախպորը ըմարաԹը։

Ամմա ըխճըկանը հորը վեզիրնեն օղում չըն, վար Թաքավերը ուրա̈ն ախճիգյը տա ախպորը տղեն։ Ամմա գյուղում ըն, վար հա̈լա̈ խոխեքյը իրեք տըրեկան ըն իլա̈լ, վար ուրա̈նց Թաքավերը խոսկ ա տըվալ, տըված խոսկն էլ ետ օտիլը ա̈մա̈լ չի կյա՛լ։

Ըտրա հետե էլ սուս ըն անում։

Կուճուր ախպորը եկած օրն էլ ըտահանց փըսակում ըն։

Քառասուն օր, քառասուն քըշեր հըսանեքյ ըն անում։ Քառասուն օրանը ետը ըխճըկանը յոր ըն օնում հըղե ըննում բըգա̈ տղեն հորը Թաքավերոթունը։ Ըտեղ էլ ըն քառասուն օր, քառասուն քշեր հըրսանեքյ անում։

Մին ուրուգյուն ախճիգյը տղեն ղե յա տամ, վար մըսլըհաԹ անե ընրա նհետ։ Տղան նի յա մըննում ընրա օԹախը, ծեռքան փըռ-

նում, նստած զրո̈ւց ին անում։ Բո̈ւրդա̈ն երգյինքյը ըրոտաց, կե-ծակը փըլըստրատեն տըվավ, էտ վախտը մին պա̈ն էտ տըղեն թխեց։

Տըղան ախ ընելավ տափեն վեր ընգյավ, ասեց. — Ինձ մըննա՛ո քըցիս վեչ, ա̈մո̈ւ ախճիգյ։

Խա̈բա̈րը հըսավ թաքավերեն, վար տըղան մեռալ ա։ Թաքա-վերը քար ար կտրալ, սկի կարըմ չար խոսե։ Մըռնելու օրանը եոը օթ օր ընցավ, ամմա ախճիգյը թողում չար թաղեն։ Նա հրամմայեց վար վըեսկե ղութի շինին, տղեն հետե։ Թաքավերը վըեսկե ղութի շինիլ տըվավ, օղում ին, թա̈ թաղեն, ամմա ախճիգյը թողում չար։

Մըռնելու օրանը եոը ընցավ մին ամիս։ Ախճիգյը հրամմայեց, վար մին ճոկ տեղ վըեսկե տոն շինին ղութում հետե։

Թաքավերը տոնը շինիլ տըվավ։ Ախճիգյը տղեն մեյիդին նհետ ապըրում ար էտ տանը, օր կանց օր մաշվում։ Մին օր էլ մեյիդին չորս ա̈նգյո̈ւնը վըեսկե ճըրա̈քյնե յար վառալ, շարալ, ինքյն էլ կոխկեն նստալ։ Մընգյ էլ երգյինքյը ըրոտաց, տանը տափը ճաքեց, մին սըեվ ձեռք եր կալավ ղութեն, քյընա̈ց։ Մընգյ էլ երգինքյը դինշացավ։

Էտ ախճիգյը գըրմանալան գյուղո̈ւմ չար, թա̈ հի՞նչ անե. — Ղու-թեն տանան վը՞րտեղ տարան, հի՞նչ քաշկու պա̈ն ա սա։

Քըղաքանը տո̈ւս իրեք հըղե յա պըժանվում ո̈ւրո̈ւր անա։ Ախ-ճիգյը ո̈ւրա̈ն ամո̈ւն՝ թաքավերեն խնթրում ա, վար էտ պըժա̈նման տեղը իրեք վըեսկե պալատ սարքե։ Ամեն մին պըլատեն հետե հա-զար վըեսկե աման ո̈ւրա̈ն քըթո̈լներավը շինել տա, վար ո̈ւրա̈ն մարթեն բաղարաքյըն անե։ Եոնան էլ ասեց, վար էտ պըլատումը հաց օտողնեն պիտի ո̈ւրա̈նց կերած ըմըննեն նան քըթո̈լնեն յոր օնեն ո̈ւրա̈նց նհետ։

Թաքավերը հարթնեն կարքաղըոթունը լըսելավ ո̈ւրա̈ն երգյի-րին սաղ հըըըստոթունավը պըդրաստեց պալատը, ըմըննեն, լոխ տը-վավ ըխճըկանը։

Ախճիգյը ըշխադողներեն, մընգյ էլ խորագյ սըրքողներեն կար-քադրեց, վար խորագյը պըլըտներումը ճոկ-ճոկ տեսակ ընին։

Տըհենց էլ սկսեց ժողովուրթեն պաղվիլը։

Հըղըցավը ընցնողներեն ուռունց հաց տալու, պաց չար թողում, պագվում ար, թա̈ քյասիբեն, թա̈ մեղավերեն, թա̈ անմեղեն։

Էտ թաքավերոթունան հեռե մին շենում էրկու քյա̈սիբ ախպեր ըն ընո̈ւմ։ Նահանց մինը քոռ ար, մինը՝ սաղ։ Էրկուսն էլ նախրչի յըն ընո̈ւմ։ Նահանց կործը էն ար, վար ամեն քըշերհանա քոռ ախ-պերը տանան տո̈ւս ար կյամ էսու-էնան էրկու-իրեք կապեգյ օղում։

էն մին ախպերն էլ կովերն ար պահում։ Ընդրանց մին կտոր հաց ին տամ, օտում ին։

Մին քըշըրհանա քոռը էլլա քյընամ ա կրպրգյնե օղե։ Մուտանըմ ա մին առուտուրականի, ղորմոթուն օղում։

Առուտուրականը կրղնըված ասում ա. — Ա՛յ ղամմազնի, քըրըքանդ ինիքյ տու՞ք, մրեզ էլ ըք ծրեղ նման ըրա՞լ, ծրեր օրը քըցա՞լ։ Օրիշնեն քյընամ ըն օտում, խըմում, վրեսկե աման նան քըթոլը յոր օնըմ, կյամ, տուք ըշխարքաս բեխաբար, ըստուր-ընդուր անա կապեգյ ըք օղում։

Քոռը էտ խաբարը ըսկընալավ ետ ա տանում տոն։ Ուրուգյունը ախպորը կյալանը ետը նաղլ ա անում առուտուրականեն ասածը։ Նահանք հրվաքած հացեն կրտորնեն յոր ըն օնում հղե ընգյնում բըդա էն պալատը, վրրդեղ ճաշ, մընգյ էլ վրեսկե յըն պըժանում։ Հըղրցումը էրկուսն էլ նըղանում ըն, մին ամես ար հրղե յին քյընամ։

Քոռը նախրչի ախպորն ասում ա. — Եք էս քըշեր ըստեղ մընանք, էքյուծ քըշըրհանա էլհա կըքյընանք, շատ ըմ նըղացալ։

Էրկուսն էլ էդ քըշեր մընամ ըն մին վիրի հանդում։ Ընդրանք ուրուր նհետ խոսում ին։

Նախրչի ախպերը ասում ա. — Մունք հրղեն գյուղում չընք, հո՞ւնց ընք քըթենում վրեսկե պալատը, համ էլ, մրն էլ ասե տեսնամ, էն առուտուրականը հո՞ւնց ա ասալ, հի՞նչ ա ասալ.

— Առուտուրականն ասեց, վար պալատնեն վրեսկե յըն, նհանցա պեցուր պըլըտնե վեշ մին տեղ կա վեչ։ Նահանք քըշեր-ցիրեկ ճըրաքի նման էրվում ըն, մրեզ լուս կրտան։

Ըտրանա ետը քոռը նախրրչի ախպորն ասեց.— Մըրավալ ըմ, եր կաց ինձ հետե ճուր քըթեր խմենքյ, հրղե ընինքյ։

Նախրչի ախպերը ըստեղ-ընդեղ շոռ ա կյամ, ճուր քըթանում։

Տեսնում ա հեռե հրղրցին յրա էրկու պեցուր ծառնը կա, ասում ա. — Ա՛յ ախպեր, ճըրեցե վե՞չ, ամմա հրեռե հրղրցեն յըրա էրկու ծառն ա ըրևում։ Ընդեղ ախպուր կինի, քյընանք ընդեղան խմե։

Նահանք հրսան ընդեղ, վրրդեղ մին կյեղեցիկ բաղ կար, բաղեն մաչին, չորս պուլլորքը վրեսկե, մին պարզ ախպուր ար քըլքըլում, ասես լհա պուլյանդ ինի։ Վրեսկե բուլբուլ, ծրղրգյնե՞... էտ բաղը քոռ ախպորը շատ ա տուր կյամ, սաբաբը վեր օթը շատ լավ ար։ Քոռ ախպերը խընթրից ըստեղ նստին, մին պատառ դինչանան, քըշերը ըստեղ մնան, քըշըրհանը էլլա հրղե կընին։

Նախրչի ախպերը տեսնում ա էտ բաղը, վրեսկե ախպուրը,

ասում. — Ա՛յ ախպեր, էս բաղը անդար չի ընիլ, տարը կկյա մրեզ մին պան կանե, եք մեր հրղեն շարունակենք։

Քոռ ախպերը շատ պընդեց ուրան ասածը։ Մնացին։ Ըխպըրան տենը էրկու պեցուր ծառնը կար, տակռեն փոչ։ Նահանք նի մրտան էտ փոչ տեղը, քոն ըլան։ Քըշըրհանը արևը հալա նոր ար շոխկը քըցալ էն հեռու սըրերեն, բուլբուլը հալա նոր ար սկսալ երք ասելը, բուրդան օթին մեչին մին հրեշ ըրևաց։ Ընրա մեշկեն նըստած ին իրեք յըղոնեգյ։ Յըղոնեգյնեն ըխպըրին քըշտեն վեր եկեն։ Ըտրանա ետը երգյինքյը նորու հընդարդվեց։ Հըրեշը պըցրացավ, յալեն յըրա պարանց ընգյավ, ըրևեն տակեն թըքանա։ Յըղոնեգյնեն ըխպըրին քըշտեն ուրանց թեփուռնեն հընեցին, տառան նախշուտ ըխճըկերքյ, հերթավ նի մտան ըխպըրին մեչը լըղացան։

Լըղանալանը ետը էտ ըխճըկերքը հրամմայեցին էն հըրեշին, վար ծրռներեն յրա վրեսկե ղութին վեր օնե, տինի տափեն։ Հըրեշը տեղան վեր թուչեց, սև ծրեռքը մեկնեց, ծառնեն կլխան ղութին եր կալավ, տիրավ ըխճըկորանցը քըշտեն, ինքյը էլլա քյընացա հեռե տեղ պարանց ընգյավ։ Ըխճըկերքը հերթավ ամեգյը մին քար եր կալան։ Ըռաչի ախճիգյը մին էրգյան պան կարթից, առանց թըխտե, ետնան քարավ ղութուն թըխեց։ Ղութուն ղափաղը պացվեց։ Էն մին ախճիգյն էլհա իտի կըրթելանը ետը սընգողեն թըխեց։

Մեյիգը սըղացավ։ Իրեքինշի ախճիգյն էլհա իտի առանց թըխտե կարթից, քարավ թըխեց։ Պարանց ընգյած մեյիգը վեր կացավ, ըխճըկորցը նհետ սկսից խոսելը։

Ըխճըկերքյը ընդրան ըսեցեն. — Ա՛յ տղա, ղաշանգյ տղա, խե՞ մրեր ծեռքեն տանչվում ըս, մրզանա նախշուն ախճրգյ չի կա՞, միննը-մինիս օղե, ամուտ ըխճըկանան ծրեռք քաշե, մունք քյրեզ կըզադենք։

Տղան նահանց ջողար տըվավ, թա. — Յրես ընդրան վեշ մին վախտ մրննաս քըցիլ չըմ, ծրզ նմաններեն ինձ հարկավեր չըն։

Էտ շողարը տալան ետը, ըխճըկերքյը կըզնվում ըն, էլլա հերթավ կարթում ըն, քարավ սընդողեն թըխում, ետնան էն հըրեշին հրամմայում, վար ղութին պըցըրցնե ծառնը։ Հըրեշը մընգյ էլ ուրան սև ծեռքավը ղութին եր կալավ, տըրավ ծառնեն յըրա։ Ըխճըկերքյը ուրանց թեփուռնեն կյեցեն, տառան յըղոնեգյնե, նըստեցեն հըրեշեն մեշկեն։ Մընգյ էլ երգյինքյը ըրոտաց, մթնեց, հըրեշը ըխճըկորանցը եր կալավ, երգյինքյը թուչից։

Քոռը նան նախըրչի ախպերը, առանց մին խոսկ ըսելու հղե ընգյան։ Շատ քյընացեն, թա խրեգյ, քըշերվա կեսեն նախըրչի

ախպերը հրուցանա տեսավ մին ըրեքյնակու նըման պան ա ըրևում, ըտրա տակեն էլ սաղ քաղաքը ըրևում ա։

Նախըրչին քոռեն ասեց.—Մուտացալ ընք, պըլըտնեն ըրևում ըն։

Շատ քյընացեն թա խրեգյ, հրսան էն պըլըտներեն, վըրդեղ ճաշ, մընդյ էլ վրեսկե յըն պըժանում։

Թաքավերեն ախճիգյը տահանց տեսավ, գյիղաց վար էրգյան հրդե յըն ընդալ, կարող ա պան տեսած ընին։ Ղըրավաշներեն հրամմայից տահանց խորագյ տան։ Ուտելանը ետը ախճիգյը նահանց տարավ մին ճոկ տոն, քըշերը մնալի հետե։ Քըշերը ըտեղ մընացին։ Քըշըրհանա թաքավերեն ախճիգյը քոռեն մընգյ էլ նախրչուն ղե տվավ ուրան կոշտը, խնթրեց նահանց, վար ուրանց օմրումը տեսած սյանները նաղլ անեն։

Նախըրչի ախպերն ասեց. — Թաքուհին ապրած կենա, մունք հի՞նչ պան ընք տեսալ շենըմը, վեր նաղլ անենքյ, իմ կործս կըվերը պահելն ա ըլալ, քոռ ախպերս էլ էս ու էն առուտուրականան փող ա հրվաքալ։

Էտ վախտը քոռ ախպերը կուփի յա տամ նախըրչի ախպորը, թաքուն փըսփըսում, թա. «Պա խե՞ հրդրցեն տեսածտ նաղլը չըս անում»։ Մեհետ, էրկու հետ վեր իտի յա անում, ախրը-վերչը թաքուհին սկանում ա ըտրանց փըսփըսոցը, խընթրում, վար մին պան պատմեն, վար քըշերը անքոնութուն օնե, լալ անց կենա։

Սրհենց էլ նախըրչի ախպերը սկսեց նաղլ անելը թաքուհուն, լոխ, հինչ վար հրդրցումը տրեսալ ըն։ Թաքուհին մեծ պատվավ էտ էրկու ախպորցը հրդրցու տիրավ, շատ վրեսկե տվավ, մըն էլ խընթրից, վար են բաղը նահանք նշանց տան, վըրդեղ նահանք վրեսկե ղութին տեսալ ըն։

Քըշըրհանը թաքուհին նան էրկու ախպերը հղե ընգյան բըդա բաղը։

Շատ քյնացեն, թա խրեգյ, հրսեն էտ բաղեն, վըրդեղ քոռ նան նախըրչի ախպերը ըլալ ըն։

Ըստեղ էլ ա թաքուհին նահանց հրդրցու տընում բըդա ուրանց երգյիրը, ինքյը մնամ բաղումը։ Վար մթնեց, թաքուհին նի մըտավ ծառնեն փըշակը, քըշերը միչև լուս ընդեղ մնաց։

Քըշըրհանը, հալա արևը նոր ար տուս կյամ, մին էլ տրեսավ երգյինքյը մթնեց, ըրոտաց, երգյիրը թոխպավ պատեց։ Բուրդան թաքուհին տրեսավ, վար մին հրրեշ երգյինքան թրուչից ըխպըրեն կոշտը, ընրա յրան իրեք յրդոնեգյնե նստած։ Յրդոնեգյնեն մնացին ըխպըրեն քըշտեն, հրրեշն էլ քյընաց յալեն յրա պարանց ընգավ։

Յղոնեգյնեն թեփուտնեն հընեցին, տառան նախշուն ըխճըկերքյ, հերթավ լըղացին ըխպըրին ճըրումը, ետնան հըրեշին հրամմայեցին, վար ղութին ծառնան յոր օնե։ Հըրեշը տեղան եր թըռչից, սրև ծրեռքը մեկնեց, ծառնան ղութին եր կալավ, տըրավ ըխճըկորանցը քըշտին, ինքյը էլլա մըխրե հրռացավ։ Էտ ըխճըկերքյը հերթավ հինչ վար մին պան կըրթեցին, հերթավ ղութուն քարավ թըխեցին, ղութուն մաչան մին մարթ եր կացավ։

Էտ ըխճըկերքյը էտ տղեն տնշիլավ հըրցըրեն։ — Ա՛ ղաշանգյ տղա, խե՞ յըս տհենց տանշվում մըեր ծեռքեն, էնա տու էլ ըս պըռըվանում, օրերտ սրև ըն ընցնում, եք, մըզանա նախշուտ էլ ախճիգյ չի ընանական, մինը եր կալ, քու ամու ըխճըկանան ծրերքյ քաշի։

Տղան ռազի չի կացավ։ Էտ ըխճըկերքյը կըզնվեցին, էլլա հերթավ ղութուն թըխեցին, էն հըրեշեն կընչեցին վար ղութին յոր օնե, տինի ուրան տրեղը։ Հըրեշը ղութին եր կալավ, ուրան սրև ծեռքավը, տարավ, տիրավ ծառնեն յըրա։ Ըխճըկերքյը մընգյ էլ ուրանց թեփուտնեն կյեցին, յըղոնեգյնե տառան, նըստեցին հըրեշեն յրան, երգյինքյը թըռչեցին։

Էտ լոխ թաքուհին տեսավ, ետնան կուճուր-կուճուր պըցըրացավ, ղութին ծառնան մին թահրավ վեր կալավ, տըրավ ըխպըրեն քըշտեն, հինչ վար էն յըղոնեգյնին ըրալ ին, ինքյըն էլ ըրավ, հինչ վար կարթալ ին, ինքյը կարթից, քարավ ղութուն թըխեց։ Էտ վախտը ղութին պացվեց, ամուն տղան ղութան եր կացավ։ Նահանք ուրուր խտտեցեն։ Նահանց հետե շատ մեծ ուրխոթուն ար։

Ախճիգյն ասեց, վար. — Էք փախճինքյ։

Ամմա ամուն տղան ռազի չըլավ, հըրեշեն անա շատ ար վախում։ Մըն էլ գյուղում ար, վար վըրդեղ էլ քյինի, հըրեշը ուրան քըթընանական ա, տանշի։

Տըսներկու սրհաթ ուրուր քըշտե կացան քըշերավ։ Տղան ըխճըկանան խընթրից, վար ուրան էլլա կախարթե, քանի հալա հըրեշը եկալ չի։

Ախճիգյը կյիժու նման տղեն կախարթից, ղութին եր կալավ, տըրավ ծառնեն յրա, ծառնեն փըշակումը նստեց։

Քըշըրհանա էլլա երգյինքը դըղըրգաց, ըրոտաց, մըթնեց, երգյիրը թոխպավ պատեց։

Հըրեշն ուրան կախարթական յըղոնեգյներավը եկու, յըղոնեգյնեն ըխպըրին քըշտեն վեր եկեն, հընվեցեն թըեփուտներան, ըխպըրին մեչին լըղացան, ետնան հրամմայեցին հըրեշեն, վար ղութին պիրի։ Հըրեշը ղութին պիրավ, ըխճըկերքը պացան, տրեսան,

վար տհենց չի ծասկած, հունց վար ուրանք ըն ծասկալ, կըզնըվեցեն, ղութին ծըսկեցեն, հըրեշեն հրամմայեցեն, վար ղութին տանե էն պեցուր սարեն քամակը, ընդեղ, վըրդեղ կախարթներեն թաքավերն ա կենում։

Հըրեշը ղութին եր կալավ, թըռչից երդյինքը, վըրդեղ քյընաց, վեշ մինը քյընաց վեչ։

Ախճիգյը մինակ տըեսավ, վար մին մըթեն, խոր քոլավ ընցավ։ Ճարը կըտրած ախճիգյը վեր կացավ, քյընաց համան էտ քոլավը, վըրդըղավ հըրեշը թռչալ ար։ Տըհենց դուզ մին տարե էտ քոլումը տանչվեց, կյեցեն շորերը ճըրղոտվեց, ինքն էլ ըրևան սըվացավ, դարդան մաշվեց, ծառներեն քըչըվավն ար սընվում։

Եկու էն օրը, հիրը վար ընրան մին տղա խոխա իլավ քոլեն մեչին։ Նա պան չար ճարում, վար խուխեն տա։ Մին օր էլ ծառնեն տակեն նստած, խոխան խոտած, քոլումը մին պեցուր սաս ըսկացավ։ Նա վըխելան նհետ խոխան թողեց ծառնեն տակեն, ինքը ծառնը պըցրացավ։ Քոլան մին առուծ տուս եկու։ Էտ առուծը նոր ար ծընալ, տուս ար եկալ օտելի պան ճարե, ըտրա հետե շոռ ար կյամ ըգեղերքյ։

Առուծը մուտացավ, խոխան չըրքթաթ տալավ բըդա առուծը քյընաց, սկսեց առուծեն կաթնը ծծել։ Տհենց էլ առուծը ամեն օր էտ համան վախտը կյալիս ար, էտ խուխեն ծրեծ տալիս։ Մարը էտ համան վախտը գյըգալավ ծառըն ար պըցրանում։

Խոխան կանոխ մըծացավ։ Առողջ ար, շատ օժավ ար, ամմա մըխրեգյ մըզմաղոտ ար, ընդրա հետե, վար վիրի հեյվանու կաթնը ար ծրծալ։ Մընգյ էլ լուզու չար գյուղում, մարը լավ չար սըվըրցըրալ, կարում չար։ Նա տասը տըրեկան ար տառալ, ամմա ուրան օժավը, ուրան ծրոքերավը վիրի հեյվաննե ար վերսում, ընդրանավ էտ քոլումը մորը նհետ օտում ին։ Մարը օղում ար լուզու սըվըրցնե, ամմա էլհա լավ չար տուս կյամ։

Նահանք քոլումը երգյան մընացեն։ Մարը շատ ար մաշվալ, վար վիրի յըն ապրում։

Նահանք մին օր քոլավը քյընամ ին, բուրգան մարը մին ըխպըրի հըսավ, վըրդըղա վըեսկե քարեր ին վեր տառնում։ Մարը գյիդաց տա հինչ ա։ Տղեն անա խընթրեց, վար էտ քըրերան հըվաքե։ Տղան գյուղում չար, թա ըտրանք հինչ ըն, տեսած չար։ Մարը տղեն անա ըրեսուն հատ եր կալավ, տըրավ ծըմերեն ղաթումը։

Մարը տղեն անումը տիրալ ար «Առուծի տղա», վար նա առուծի կաթնավ ար մըծացալ, շատ օժավ ար։ Մարը նան տղան էրգյան

շոռ կյալանը ետը, թուղեցեն էտ ղալին քոլերը, հրսան մին լեն, կանանչ հանդ։ Մարը հրոնըցե տրեսավ, վար հանդումը չորընեն կան։ Նա հրսկրցրուց Առուծեն տրղեն, վար քյընա չորաններեն անա մին յափունչի օգե, կյնալու հետե, կյեցեն շոր չիկա։ Առուծեն տղան գյանքումը մարթ տեսած չար։ Տրա հետե էլ նա մնաց մաթալ, վար նահանց տեսավ շարքավ նստած զրուց անելիս։

Առուծին տղան մուտացավ չորաններեն, վար նստած ին մին պեցուր ծառնեն տակեն։ Նա ծրմակեն գաղաններեն նման յրա տրվավ, ծառնը կոտրեց, խրեդյ մնաց, վար չորաններեն կտորե։ Զորաննեն ղե տվին, ուրանց նհետ հաց օտե։ Առուծին տղան գյուղում չար, վար հացը օտելի հետե յա։ Նա մին պատառ պերանը քըցից, տեսավ շատ համավ ա, հացը մընգյ էլ մնացած օտելի պանները եր կալավ սկսեց օտելը։

Զորաննեն վրխելան նհետ վեշմին խոսկ չասեցեն։ Օտելանը ետը Առուծեն տղան ծրեռքավ նշանց ըրավ՝ մին յափունչի տան։ Նահանք դաստի հրսկացան, վար օղում ա յափունչիներան մինը յոր օնե։ Զորաննեն մին քանե շենու հաց տրվեն, մին էրկու յափունչի տրվեն, մրեծ պատվավ հրղե քյրցեցեն։ Առուծեն տրղան քյընաց մորը կոշտը։ Մարը, վար էրգյան տարեքյ հացու իրես չար տրեսալ, ըստուծեն փառք տալավ հացը կերավ, յափունչիներան մինը կյեցավ, մինն էլ տղեն տրվավ, վար յրան քրցի։

Ըտրանա ետը քյընացին չորաններեն կոշտը։ Էս դոնումրս չորաննեն շատ վրխեցան, Առուծեն տղեն մորը ղաչանք ըրեն, վար ուրան տղեն ասի, վար մարթ չի սպանե։

Առուծեն տղան օրանց օր սրվերում ար մարթու լուզու, նահանց օրենքյնեն։

Մին քանե ամես չորաններեն քըշտեն կրենում ըն։ Մարը տեսնում ա, վար չորաններեն ապրուստը պրրծընում ա։ Մեհետ նահանց խընթրրում ա, վար Առուծեն տղեն ուրանց նհետ տանեն քաղաք մաղերը եր անեն, քանի վեր մրղմազոտ ար, համ էլ օտելի պաներ առնեն։ Ըտրա հետե էլ մին վրեսկե հանեց ծրմերեն մեչան, տրվավ էտ չորաններան մինին, վերը ուրան տղեն նհետ մընացածներան շատ ար մոտիկ։

Քաղաքը էնքան էլ հեռու չար։ Քյընացին, Առյուծեն տղեն տարան մաղերը եր արին, իրեք սրհաթ զոռավ պրրծին խեղճ դալլաքնին։ Զորանը փողը տրվավ, ամմա Առուծին տղան ըտրա ավաղը դալլաքեն անջուկը պուկեց։ Ետնան բազար քյընացին, ամեն հինչան առեն, էլլհա ետ տառան ուրանց բինան, չորաններեն կոշտը։

Հըղեցը էլ սաղ մարթ չի մնաց Առուծեն տղան մինին անջուկն ար պուկում, մինին՝ ծրեռքը, մինին՝ վրեննը։

Չոբաննեն էտ լոխ մորը նաղլ ըրեն։ Մարը յավաշ-յավաշ լոխ կըլխու քյըցեց ուրան տըղեն։ Տըղան խելունք մարթ ար տառնում, պարեկամ նան թըշնամի ար ճրնանչում։

Էտ խաբարը հըսալ ար թաքավերեն անջուկը, վար մին օժավ տըղա կա քըղաքեն քըշտերքեն, վար մինին առանց կըլոխ ա թողում, մինին՝ առանց վրեննը-ծրեռք։

Թաքավերը հրամման ա տամ, վեր Առուծեն տղան էտ ուրուգյունը քյընա կոշտը, ամմա Առուծեն տղան քյընամ չի՞։

Էս գոնում էլ թաքավերը ուրան վեզիրներան ըրկունեն զարկեց, մինդյ էլ մին դաստա սալդաթ, վար օժավ էլա Առուծէն տըղեն պիրին ուրան կոշտը։ Վեզիրնեն սալդաթներեն նհետ քյընացեն Առուծեն տըղեն կոշտը, լոխ նաղլ ըրեն, հինչ վար թաքավերը հրամմայալ ար։ Առուծեն տըղան կըղնըվեց նահանց յրա, կեսեն կըտորեց, մին քանիսն էլ փախեն թաքավերեն կոշտը հըսան։

Նահանք ըլածը պըտմեցեն թաքավերեն, ըսեցեն.— Նա նհենց օժավ տըղա յա, վար ընդրա մընանը քու երդյիրումըտ կա վեչ։

Մընդյ էլ ըսեցեն, վար. — Առուծեն տըղեն անա կըման, ընդեղ մին չոբան էլ կա։ Էտ չոբանը կարող ա Առուծեն տըղեն մին թահրավ քու կոշտըտ պիրի, վար պիրի վեչ, կըլոխը կտրե։

Խարարը չոբանեն հըսավ, չոբանը ընդյավ քընենքյի մեչ, ընդրա հետե, վար ինքյը կարալ չի զոռ անե Առուծեն տըղեն։ Մին հըղե յար մնացալ, վար քյընա մորը կոշտը, մորն ասե, բալքյաս մարը մին ճար անե, տանե թաքավերեն կոշտը։

Մարը տըղեն նաղլ ըրավ, թա հու վա՞ թաքավերը, հո՞ւնց պիտի ընրա նհետ խոսե։ Առուծեն տըղան լոխ հըսկացավ, թաքավերեն կոշտը քյընալի հետե ռազի ըլավ։

Նա չոբանեն նհետ հըղե ըլավ քաղաքը։ Հըսեն թաքավերեն պալատը, հունց վար մարըն ար ասալ թաքավերեն նհետ խոսեց։ Թաքավերեն քախցը լուզունն ուրան տուր եկու։ Թաքավերը ընրան լավ պատիվ տըվավ։ Ընդրանա ետը չոբանեն զարկեց, վար մորըն էլ պիրի։ Չոբանը քյընաց մարն էլ պիրավ թաքավերեն կոշտը։

Թաքավերը տըեսավ, վար Առուծեն տըղեն մարը թաքավերական գյանք քաշած կնեգյ ա ըրվում։

Ընրան ճոկ կրնալու տըեզ տըվավ։

Թաքավերը Առուծեն տըղեն ուտուցունում ար ուրան փահըվաններեն մընան։

Թաքավէրը քառասուն փա̈հլըվան օնէր ընդի օժավ, վէր մին տըեղ նահանց մընան կար վէչ։ Թաքավէրը Առո̄ւծեն տըղեն նհէտ կանդըրախտ ար կապալ, վար նա ո̄ւրա̈ն փա̈հլըվաններեն նհէտ պիտի կոխըը կենա մին ամսանը ետը։ Առո̄ւծեն տըղան շատ ար օրախ, վար պիտի կոխըը կընէնար փա̈հլըվաններեն նհէտ։

Թաքավէրը խոսկ ար տըվալ, վար թա̈ հաղթե ընդըրանց ո̄ւրա̈ն ախճիգյը տալու ա Առո̄ւծեն տըղեն։ Ախճիգյըն էլ սիրահարվալ ար Առո̄ւծեն տըղեն յըրան։ Մին ամսանը ետը Առո̄ւծեն տըղան կոխըը կացավ Թաքավէրեն փա̈հլըվաններեն նհէտ։

Ամեն մինին նհէտ հենգյ մուռուտան էվել կոխըը չար կընենում, դա̈ստի սըտկըցընում ար, թող անում քյըցո̄ւմ տըենը։ Թաքավէրը գյուդո̄ւմ չար, թա̈ հի՞նչ անե։

Առո̄ւծեն տըղան Թաքավէրեն ախճիգյը պահանջից։

Թաքավէրըն ասեց. — Թա̈ տու քառասունինշի փա̈հլըվանին էլ հախթես, էն վախտը ախճիգյըս քունն ա։

Առուծեն տըղան ռազի կացավ։ Վէրչի օրը նա կոխւ կացավ էտ փա̈հլըվանեն նհէտ, վար վէշ մինը հա̈լա̈ ընրան հախտած կար վէչ։ Առուծեն տըղան խիլըա̈ նըղացալ ար, քանի վար էն փա̈հլըվանն էլ ար օժավ։ Ամմա վէրչում էտ փա̈հլըվանեն կլոխըն էլ պուկից, թող ըրավ։ Թաքավէրը էլ կարում չի մին պա̈ն ասե, ընգյնում ա մըտըծունքե մեչ։

Էրգյան մըտըծելանը ետը Առո̄ւծեն տըղեն ասում ա. — Առուծե տըղա, ախճիգյըս քունն ա, մինա̈կ տու էս պայմանը կըդարե։ Ինձ հետի էնքան լալ նան մարջան պեր, վար նրանա վըեսկե խոնչանե պըդըրաստես քու հըրսընքետ հետե։

Առուծեն տըղան ըեյքեփ քյըընա̈մ ա մորը կոշտը։

Մարը գյիդա̈ց, թա̈ խե՞ յա ըեյքեփ, ասեց. — Առո̄ւծի տըղա, տու քյըընա̈ Թաքավէրան մին ծի, մընգյ էլ էրկու փութ վըեսկե օզե, ետնան էլ լոխ մինչև քըղաքան տո̄ւս կյալը ժողովուրթեն պըժա̈նե, լալերն էլ, վար վըեսկում անա թանգյ ա, կպիրիս էն ըխպըրա̈ն, վար մունք տըեսալ ընք։

Առո̄ւծին տըղան էտ պայմանավը Թաքավէրեն կոշտը եկու, Թաքավէրեն անա վըեսկեն եր կա̈լա̈վ, հըղե ընգյավ։

Հըղեցը վըեսկեն լոխ պըժա̈նից ժողովուրթեն, ետնան քյըընա̈ց հըսավ ընդեղ, վըրդըղա իրեքյ հըղե յըն պըժանվում։ Նա էտ հըղըցումը մին պառավ մարթու պըտահեց։

Պառավ մարթը հըրցըրուց Առուծեն տըղեն. — Վէրթի, վըրդեղ ըս քյըընա̈մ էս հըղեցն հենց հըղե յա՞, վար քյըընա̈ցողը ետ չի

տա̈ռնում։ Անգուճ ըրա, հինչ վար յըես ասիմ։ Տու կըքյընա̈ս էս հը-ղըցավը, կըհասնես մին ղա̈լին քոլե, վար էրկու սըրերեն ղաթումն ա։ Ընդեղ մին ախպո̈ւր կա, վըրդըղա վըեսկե քարեր, մընգյ էլ լալեր ա վեր տա̈ռնում։ Վըեսկեն յոր ունելանը ետը, հիրը հըղե ըննիս, երգյինքյը տուղտուղլական ա, մըթնըլա̈կան ա էտ ըխպո̈ւրին եշող հըրեշեն օժան, ամմա տու ետ եշիս վեչ, էտ էրկու սարերը բեշիթ ծըսկվըլական ըն, վար կարաս տո̈ւս կյաս, ըզըդվըլական ըս, թա չէ, ղաթումն ըս մըննական։

Առո̈ւծեն տըղան ասում ա. — Պապե, շումրակալ ըմ, դե յըես քյընա̈մ։

Ասում ա, հըղե ընո̈ւմ։

Շատ ա քյնա̈մ, խրեգյ ա քյընա̈մ, հըսնում ա էն ըխպո̈ւրեն, վըրդըղա վըեսկե, մընգյ էլ լալ ար վեր տա̈ռնո̈ւմ։

Առո̈ւծեն տըղան վըեսկեն նան լալը հըվաքում ա, ծին նստում հըղե ըննո̈ւմ բըդա տոն։ Քոլան հա̈լա̈ տո̈ւս եկած վեչ, երգյինքյը տըղտողաց, երգիրը մըթնեց, սարերը ո̈ւրո̈ւր թըխեցեն, ամմա Առո̈ւծեն տըղան քոլան շուտ տո̈ւս եկավ։ Նա վար պըլատան մու-տացավ, թաքավերեն վեղիրնեն, մընգյ էլ թաքավերը ընրա հետե յին մտածում, վար Առո̈ւծեն տղան ետ ա եկալ, մըեռալ չի՞, բա հո՞նց կինի՞ ըխճըկանը հարցը։ Առո̈ւծեն տըղան մըեծ հաճողութունավ տո̈ւս եկու թաքավերեն առաչը։

Թաքավերը մին պայման էլ օներ։ Նա ղե տվավ Առո̈ւծեն տըղեն, ասեց.— Ա՛ վերթի, ախճիգյս քունն ա, մինա̈կ էս պայմանն էլ կը-գարեր։ Քյըեղ հետե օղում ըմ մին պալատ շինիլ տամ, քյընա̈ վըեսկե սո̈ւներ պեր, վար շատ պեցո̈ւր ինի, վար լա̈վ շափաղ տա, վար իտի պալատ վեչ մին երգյիրում ինի վեչ։

Առո̈ւծեն տըղան ասեց. — Լա̈վ, կը պիրիմ, ըտ էլ կըգըղարեմ։

Նա քյընա̈ց ո̈ւրա̈ն մորը կոշտը, ըեյքեփ ընրան եշից։ Մարը մընգյ էլ գյիդա̈ց ընրա դա̈րդը, ասեց. — Ա՛ վերթի, մընգյ էլ թաքա-վերեն անա օղե էնքան վըեսկե, վերքան ըռըշի դո̈ննումն ըս օղալ։ Էլհա առաչվա հըղըցավը քյընա̈, էլհա էտ էրկու փութ վըեսկեն ժո-ղովուրթեն տո, ամմա էս դո̈ննում տըժեր ա ըննա̈կան, սայաղ կաց։

Առո̈ւծեն տըղան լոխ թաքավերեն անա եր կալավ, վըեսկեն ժողովուրթեն պըժա̈նից, հըղե ընգյավ։

Էս դո̈ննում էլհա էն պառավ մարթեն պըտահեց։ Նա Առո̈ւծեն տըղեն անա հըրցըրուց.—Վե՛րթի, էս դո̈ննում վը՞րդեղ ըս քյընա̈մ։

Առո̈ւծին տըղան ասեց. — Պա՛պե, յըես քյընա̈մ ըմ թաքավե-րեն հրամմանավը քառասում վըեսկե ծառներ պիրիմ, վար սո̈ւն,

սու̈թուն շինել տա մէն ինդի պլատու հետե, վար սաղ ըշխարքումս կա վեչ։

— Վերթի, էտ հըղըցավը վար քյընա̈ս, էլ ետ չըս տըռնըլական։ Տա շատ տըժա̈ր պա̈ն ա, ամմա յըես էլլա քյո̈մա̈գյ կանեմ։ Ընդըղա, վըրդըղա էն վըեսկեն նան լալը պիրալ ըս, ընդրանա իրեք անքամ շատ հեռե յա, վար հըսնես էն քոլեն, վըրդեղ քըշեր-ցիրեկ ծառները լու̈ս ըն տամ։ Ծիտ կըթողես մըխըրե հեռե, տու յըվըշյավաշ կմոտանաս հըրեշներեն պըլատեն, վըրդեղ հարո̈ւր հըրեշ ըն կենում։ Նահանց մըեծին օխտը կլո̈խ օնե։ Ընրա վեննը մին փեդ ա ծակալ, հեսա տըսնըհենգյ տարե յա, տու̈ս չի կյա՞մ։ Տու թաքում կը մուտանաս, ծիքյ կտաս, փեդը վըեննան կըհանես, ինքյտ էլ կյողը կը կենաս, վար քյըեզ տեսնա վեչ, թա չէ, վերշը փիս ա ըննա̈կան։ Ամմա մին պա̈ն էլ ասեմ, վե՛րթի, վար տու գյուղում չըս։ Սըրանա տըսնըհենգյ տարե առաչ քու հա̈ր հա̈լա̈ նոր ար փըսակվալ, քու հոր էտ հըրեշեն ըխճըկերքյը կյուղացալ ըն, տարա՞լ։ Քու հա̈ր հեն ա մին վըեսկե ղուլթում, մին սարե պըտկե։ Վար փեդը տու̈ս օնես հըրեշեն վըեննան, նա դինշանա, քոն ա ըննա̈կան օխտը օր, օխտը քըշեր։

Մինչև քոն ընիլը նա ըսըլական ա. «Ո՛վ պարի մարթ, վար էս ըվո̈թումը ըրալ ըս, մեյդան տո̈ւս եք»։ Ամմա տու տո̈ւս չիկյա̈ս, մինչև երթումնը չոտե ո̈ւրա̈ն ջադու ըխճըկորցը անումավը։ Ըտրանա ետը տու̈ս կկյաս, ընրանա օղիս քառասուն վըեսկե ծառ, մընգյ էլ քու հոր վըեսկե ղուլթեն էտ հըրեղան ըխճըկորցը նհետ։

Առուծեն տըղան ասում ա. — Շունրակալ ըմ, պապե՛։ — Ասում ա, հըղե ընգյնում։

Նա դո̈ւզ իրեք ամես հըղե յա քյընում. մըթեն քոլերավ, պեցուր սըրերավ։ Խրեգյ ար մընացալ վար հըսնե։ Քոլեն վըեսկե շափաղը ընգալ ար ընդո̈ւր ծիյին յըրան, հըռուցանա նա հըրեշեն կյո̈ւկո̈ռուցը սկացավ, վար տըսնըհենգյ տարե յա, տանջվում ար։

Առուծեն տըղան շատ վախեց. քոլը հենց ար մին կախարթական աշխարք ինի։ Նա ծին քոլան պատառ հըեռե կապեց, մուտացավ էն ծո̈րեն վըրդըղան կյո̈ւկո̈ռոց ար կյամ։ Մուտացավ հրեշեն, ամմա հըրեշը ընրան տեսնում չար, շատ ար տանջվում ցավան նհետ։ Առուծեն տըղան վըեղը քանդեց, կյողը կընալի հետե, պըդրաստվեց, վար փեդը հըրեշեն վըեննան հանե։ Նա փեդը տո̈ւս կալավ, հըրեշը մին հենց կյոռաց, վար երգյինքյը տըղտո̈ղաց, աշխարքը մըթնեց, ամեն մին ծառնեն տական մին կաղան տու̈ս եկու, վար քըթա̈նա̈ էն մարթեն, վար ծըեռք ա տըվալ ո̈ւրա̈նց թաքավերեն։

Հրրեշը դինջ քոն ըլավ, մընացածնեն էլ ուրանց տեղերը չքըվեցեն։

Օխտը օր օխտը քըշերանը ետը հրրեշը զարթնեց, կյոռռաց թա.
— Հու վը՞ս, տուս եք, մարթ ըս, թա վիրի հեյվան, լավ փեշքյեշ ըս ստննական, տուս եք լուս աշխարք, հինչ վար օղիս, եր կալ ինձանա։

Ամմա Առուծեն տըղան էն պառավ մարթեն ասածը մննան քյըցալ չա՞ր։

Վար իրեքինչի դոնումը հրրեշը ղե տվավ. — Հո՞ւվըս, տուս եք մեյդան, ինձանա քու օղած փեշքյեշտ եր կալ, իմ իրեք ըխճըկանըս արևն ըմ ասըմ, ընդրանց անըմավը օրթում ըմ օտըմ։

Առուծեն տըղան տուս եկու, հրրեշեն քըշտեն վրեննը կացավ։

Հրրեշը ընրա սուրուն, շահիլ իրեսը տըսնալավ ասեց. — Առուծն տըղա, միչև օրըս նհենց մարթ չի ըլալ, վար իմ վրեղումս վրեննը տինի։ Տու առաչի մարթն ըս, վար եկեր ստեղ, ինձ էլ լըվոթուն արեր, հինչ վար օղում ըս, ասե, քյըեզ կբախշեմ, հալա, իմ ըխճըկորանցն էլ։

Առուծեն տըղան ասեց. — Գյանքտ է՛լ էվիլ ընի՞, յըես պիտի տանեմ քառասուն վրեսկե ծառներ, մընգյ էլ իմ հոր վրեսկե ղութին, վար քու ըխճըկերքտ կախարթալ ըն, պիրալ, տըսնըհենգյ տարե առաչ։

Հրրեշը պեցուր կյուռալավ հըվաքեց ուրան ղարավուլչիներեն, վար վրեսկե բաղը պահում ին, նհանցա քըռըսունեն հրամմայեց, վար վրեսկե ծառները պիրեն, էն մինին էլ ղարկեց, վար ըխճըկորցը ղե տա։ Ընդրա ասածնեն լոխ արին։

Հրրեշը ուրան ղարավաշներեն կարքատրեց, վար Առուծեն տըղեն մին սհաթումը քառասուն վրեսկե ծըռներեն նհետ հըսցընեն ուրան երգյիրը, հալա իրեք ախճիգյն էլ նհետը։ Ըխճըկերքը կըգնըվեցեն, ամմա հորը հրամման ար, ըեդմա ընին։

Քըշրհանը Առուծեն տըղան մեծ փեշքյեշներավ, քառասուն գյանդա հրրեշների, քառասուն վրեսկե ծառնի, իրեք ըխճըկա նհետ հըղե իլավ բըդա թաքավերեն պալատը։ Հալա մին սհաթը թամամ չար, վար տեղ հըսան։ Թաքավերը հըռուցանա տեսալ ար, վար կյամ ըն, հրամմայալ ար, վար տըռները ծասկեն։ Առուծեն տըղան տըսնալավ, վար տըռները ծասկած ա, օժավ կոտրից, նի մտավ քաղաքը։ Թաքավերը վըխելան նհետ պըլատան տուս չար կյամ։

Վրեսկե ծըռներեն շափաղը ընգյալ ար սաղ քաղաքը։ Իրեք օր քըղաքումը տուրուր կյըվող չիկար։

Առուծեն տղան թաքավերեն ասեց. — Ամմա՞ն մին հրրեշեն նհետ մին կյումաշ տիր, վար նահանց ղարկենքյ ուրանց տեղը։

Թաքավերը լոխ ըրավ, հինչ վար Առո̈ւծեն տղան օղալ ար։ Հըրեշներեն հըղե քյցից ո̈ւրա̈նց երգիրը։

Մարը գյուղում չար, վար ո̈ւրա̈ն տըղան հորը ղուլթին պիրալ ա՛։

Առո̈ւծեն տըղան սաղ քըղաքեն օժավ ուստեքյը նան փա̈հլը-վաներն հըվաքեց, մին շերեթ չի քաշած պալատը շինեց։ Նհենց մին պալատ, վար հա̈լա̈ ըշխարքումս իլա̈լ չար։ Էտ պալատը լո̈ւս ար տամ, հունցու արևը։

Առո̈ւծեն տըղան քյընա̈մ ա Թաքավերեն կոշտը։ Թաքավերը էս դո̈նում ռազի ըլա̈վ, վար ո̈ւրա̈ն ախճիգյը Առո̈ւծեն տըղեն տա։ Առո̈ւ-ծեն տըղան ետնան քյընա̈ց մորը կոշտը, լոխ նաղլ ըրավ։

Մա̈րը շատ ըեքյըփացավ, հըրցրուց. — Ա՛յ վերթի, տու ամեն հինչ արեր, կըդըըեցիր, հի՞նչ կինի իմ խնթիրքս էլ կըղարես։

Առո̈ւծեն տըղան ասեց. — Ա՛ մար, ասե, յըես պադրաստ ըմ քու հրամմանեն։

Մարը լոխ, հինչ վար ո̈ւրա̈ն կըլխավըն անց ար կացալ, նաղլ ըրավ։

Առո̈ւծեն տըղան ասեց. — Ա՛ մար, լա̈վ, մինչև մին սհաթը կը կըգարիմ։ Ամմա իմ հա̈ր սըզանալ չի՛։

Առո̈ւծեն տըղան եկու պալատը, հրամմայեց էն կախարթ ըխ-ճըկորցը, վար ղուլթին պիրին պըլատեն մեչը։ Ղուլթին պիրան։ Առո̈ւ-ծեն տըղան ղե տվավ մորը, մարը եկավ, տեսավ վըեսկե ղուլթին, մըետը քըցից էն խոսկը, վար ասալ ար մարթը, մըռնելիս վախտը։

Ղե տվավ. — Ա՜խ ղորփոր տըղա, յըես քյըեզ մննաս քըցալ ըմ, — ետնան օշան քյընա̈ց, վեր ընգյավ։

Առո̈ւծեն տըղան հրամմայեց մորը ետ պիրին, մարը օշը կլո̈-խը հըվաքեց։ Ետնան էն իրեք ախճիգյը հերթավ կըրթեցեն առանց թըխտի, ղուլթում թըխեցեն, ղուլթին պա̈ց ըլա̈վ, հա̈րը զո̈ւրթնա̈ցավ, օշը կլո̈խը հըվաքեց։ Աշխարքը լո̈ւսա̈ցա̈վ, լոխ ուրխացեն։

Սկսեցեն հըրսանեքյ անելը։ Առո̈ւծեն տըղեն փըսըկեցան Թա-քավերեն ըխճըկանը նհետ, մար նան հա̈րն էլ ո̈ւրո̈ւր նհետ։ Քառա-սուն օր, քառասուն քըշեր հըրսանեքյ ըրեն։

Էն իրեք կախարթ ըխճըկերքն էլ կորան, քյեցեն ո̈ւրա̈նց տըեղը, միչև օրս էլ կան վեչ։

Երգյինքան իրեք խնձո̈ր վեր ընգավ. մինը՝ ասողին, մինը՝ կյը-րողին, մինն էլ՝ կարթողին։